Հաշվետվություն

2017թ. մայիսի 22-ից 26-ը Կանկունում կայացած Աղետների ռիսկի նվազեցման գլոբալ պլատֆորմին մասնակցության

1. **Անունը, ազգանունը**

   Դավիթ Տոնոյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

   ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար (պատվիրակության կազմը կցվում է)

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

   Կանկուն (Մեքսիկական Միացյալ Նահանգներ), 2017թ. մայիսի 22-ից 26-ը

4. **Հրավիրող կողմը**

   ՄԱԿ-ի աղետների ռիսկի նվազեցման գրասենյակի Կենտրոնական Ասիայի և Հարավային Կովկասի գրասենյակ

5. **Գործուղման նպատակը**

   Մասնակցել Մեքսիկայի Կանկուն քաղաքում անցկացվող ՄԱԿ-ի աղետների ռիսկի նվազեցման գլոբալ պլատֆորմին, որը հնարավորություն կընձեռի կառավարություններին, ՀԿ-ներին, միջազգային կազմակերպություններին, գիտական-փորձագիտական շրջանակներին, քաղաքացիական հասարակությանը՝ փորձի փոխանակման հիման վրա մշակելու ռազմավարական ուղեցույց՝ ԱՌՆ գլոբալ համաձայնագրերի կյանքի կոչման համար:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

   2017թ. մայիսի 22-ից 26-ը աշխատանքային այցի շրջանակներում ունեցել եմ մի շարք հանդիպումներ, մասնավորապես՝

- Հանդիպում ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի ԱՌՆ գծով հատուկ ներկայացուցիչ Ռոբերտ Գլասերի հետ - հանդիպման ընթացքում քննարկվել են ՄԱԿ-ի ԱՌՆ գրասենյակի (UNISDR) և, առհասարակ, ՄԱԿ-ի շրջանակներում համագործակցության (ինչպես ՄԱԿ-ի, այնպես էլ ՄԱԿ-ի հովանու ներքո այլ երկրների հետ, այդ թվում՝ հարևան) ընդլայնման հնարավորությունները:

  Հանդիպման ընթացքում նշել եմ, որ նախարարությունն ընդունում և բարձր է գնահատում UNISDR-ի կարևոր դերը՝ Հայաստանին ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման համար շարունակաբար տրամադրվող աջակցության համար, որի շնորհիվ Հայաստանը վերածվել է արձագանքման կողմնորոշում որդեգրած պետությունից ռիսկերի իրազեկության բարձրացման և դիմակայունության ստեղծման երկրի՝ ձգտելով կենտրոնացնել ջանքերը՝ Սենդայի գործողությունների ծրագիրը և Կայուն զարգացման նպատակներն իրականացնելու ուղղությամբ: Աղետների ռիսկի կառավարման հարցում կարևորել եմ միասնական իրավական շրջանակը, որն իր մեջ կներառի ինչպես բնակչության պաշտպանությունը, այնպես էլ քաղաքացիական պաշտպանությունը:
- Հանդիպում Մեքսիկայի քաղաքացիական պաշտպանության ազգային համակարգող Լուիս Ֆելիպ Պունետոյի հետ - հանդիպման ընթացքում երկուստեք կարևորել ենք երկու երկրների միջև համագործակցությունն ԱՌՆ ոլորտում՝ հաշվի առնելով այն, որ թե՛ Հայաստանը, և թե՛ Մեքսիկան գտնվում են սեյսմավտանգ գոտիներում: Հանդիպմանը նախանշվել են նաև երկու երկրների միջև համագործակցության հեռանկարներն ու հնարավորությունները:
- Հանդիպում Քաղաքացիական պաշտպանության միջազգային կազմակերպության գլխավոր քարտուղար Վլադիմիր Կուվշինովի հետ - հանդիպման ընթացքում քննարկվել են երկկողմ հարաբերությունների և փոխգործակցության զարգացման հեռանկարներն ու հնարավորությունները,

ինչպես նաև հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնի կարողությունների կիրառումն այդ ուղղությամբ:

- Հանդիպում ՄԱԶԾ քաղաքականության և ծրագրերի օժանդակության բյուրոյի կլիմայի փոփոխության և աղետների ռիսկի նվազեցման տնօրեն Ջո Շոյերի հետ – քննարկվել են ԱՌՆ ոլորտում միջազգային համագործակցության խորացման հեռանկարները:
- Հանդիպում ՄԱԿ-ի ԱՌՆ գրասենյակի Եվրոպայի տարածաշրջանի ղեկավար Պաոլա Ալբրիտոյի հետ - քննարկվել են տարածաշրջանային, այդ թվում՝ անդրսահմանային համագործակցության խորացման հնարավոր տարբերակները:
- Հանդիպում Եվրամիության մարդասիրական օգնության և ճգնաժամերի կառավարման հարցերով հանձնակատար Խրիստոս Ստիլիանիդեսի հետ - քննարկվել են երկկողմ հետաքրքրության բազմաշերտ հարցեր: Հաշվի առնելով ԵՄ և Հայաստանի միջև համապարփակ ու ընդլայնված գործընկերության նախաստորագրված համաձայնագրի շրջանակներում նախատեսվող համագործակցության նոր հնարավորությունները՝ քննարկել ենք ծրագրային առաջնահերթությունների մեջ ԱՌՆ ոլորտն ընդգրկելու անհրաժեշտությունը:
- Հանդիպում Իրանի Իսլամական Հանրապետության ներքին գործերի փոխնախարար և Աղետների կառավարման ազգային կազմակերպության ղեկավար Էսմայիլ Նաջարի հետ - քննարկվել են երկու երկրների միջև համագործակցության խորացման հեռանկարները՝ աղետների ռիսկի նվազեցման, ինչպես նաև համատեղ վարժանքների ու փորձագետների փոխանակման ուղղությամբ:
- Հանդիպում Չինաստանի պատվիրակության ղեկավար, ՉԺՀ քաղաքացիական հարցերով փոխնախարար Գու Ժառքսիի հետ - քննարկել ենք վաղ ազդարարման ոլորտում համագործակցության, Չինաստանի՝ աղետների ռիսկերի նվազեցման (ԱՌՆ) գերժամանակակից կենտրոնի վերլուծական կարողությունների ուսումնասիրման, ինչպես նաև բնական ու

մարդածին աղետների հետազոտությունների իրականացման հնարավորությունը: Հանդիպման ընթացքում նախանշվել և կարևորվել են աղետից հետո վերականգնման կարողությունների զարգացմանն ուղղված փոխգործակցության հեռանկարները:

- Հանդիպում Իտալիայի պատվիրակության ղեկավար, վարչապետի վարչակազմում Իտալիայի բնակչության պաշտպանության վարչության պետ Ֆաբրիցիո Կուրցիոյի հետ - քննարկել ենք բնակչության պաշտպանության ոլորտում համագործակցության խորացման հնարավորությունները:
- Հանդիպում ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID) ներկայացուցիչների հետ - քննարկել ենք համագործակցության ակտիվացման հնարավոր ուղղությունները, ինչպես նաև՝ նահանգային համագործակցության շրջանակներում Կանզասի ազգային գվարդիայի հետ նոր նախաձեռնությունների իրականացման հեռանկարները: Նախանշվել են ԱՄՆ արտակարգ իրավիճակների կառավարման դաշնային գործակալության (FEMA), ինչպես նաև Օդագնացության և տիեզերական տարածության հետազոտությունների ազգային գործակալության (NASA) համապատասխան ծառայությունների միջև փոխգործակցության հաստատման հնարավորությունները:
- Հանդիպում Համաշխարհային բանկի ներկայացուցիչների հետ- քննարկվել են Հայաստանում հիդրոմետ ծառայության կողմից իրականցվող գործառույթների իրավիճակի գնահատման և դրա արդյունքում համակարգի արդիականացման առաջարկությունների մշակմանը վերաբերող հարցերը:
- Գլոբալ պլատֆորմի շրջանակներում հանդես եմ եկել ազգային զեկույցով՝ ներակայացնելով աղետների ռիսկի կառավարման ոլորտում Հայաստանի ձեռքբերումները և գերակայությունների ուղղությամբ նախատեսվող գործողությունները, համանախագահությամբ վարել եմ վաղ ազդարարման և ռիսկի վերաբերյալ ինֆորմացիայի մասին հատուկ նիստը, ինչպես նաև մասնակցել եմ սեկտորալ պլանավորման մեջ աղետների ռիսկի նվազեցման

ինտեգրման վերաբերյալ նախարարական կլոր սեղանին՝ ներկայացնելով համապատասխան մեկնաբանություններ:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

- Մեքսիկայի քաղաքացիական պաշտպանության ազգային համակարգող Լուիս Ֆելիպ Պունետոյի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել մոտ ժամանակներս երկու պետությունների միջև հուշագիր կնքելու ուղղությամբ:
- ՄԱԶԾ քաղաքականության և ծրագրերի օժանդակության բյուրոյի կլիմայի փոփոխության և աղետների ռիսկի նվազեցման տնօրեն Ջո Շոյերի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել Հայաստանում կյանքի կոչել Կայուն զարգացման նպատակների իրագործման հետ կապակցված ԱՌՆ գործընթացները. բացի այդ՝ Հայաստանը պատրաստակամություն է հայտնել ՄԱԶԾ հետ համատեղ հյուրընկալել աղետների ռիսկի կառավարման վերաբերյալ խորհրդաժողով:
- ՄԱԿ-ի ԱՌՆ գրասենյակի եվրոպայի տարածաշրջանի ղեկավար Պաոլա Ալբրիտոյի և ՄԱԿ-ի ԱՌՆ գրասենյակի Եվրոպայի տարածաշրջանի ղեկավար Պաոլա Ալբրիտոյի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել Հայաստանում 2018 թ.-ին անցկացնել ռեգիոնալ պլատֆորմի համաժողով:
- Եվրամիության մարդասիրական օգնության և ճգնաժամերի կառավարման հարցերով հանձնակատար Խրիստոս Ստիլիանիդեսի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել առավելագույնս արդյունավետ օգտագործել ԵՄ մարդասիրական աջակցության և ճգնաժամերի կառավարման առկա գործիքակազմը:
- Իտալիայի բնակչության պաշտպանության ազգային վարչության պետ Ֆաբրիցիո Կուրցիոյի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել վերանայել Հայաստանի և Իտալիայի միջև գործող փոխըմբռնման

հուշագիրը, համատեղ աշխատանքներ իրականացնել ԱՌՆ ռեգիոնալ պլատֆորմում, ինչպես նաև սկսել երկու երկրների ազգային կարմիր խաչի ընկերությունների միջև համագործակցության ակտիվացմանն ուղղված աշխատանքները:

- Պայմանավորվածություն է ձեռք բերվել նաև Հարավային Կովկասում USAID-ի տարածաշրջանային գրասենյակի հետ համագործակցության խորացման ուղղությամբ:
- Համաշխարհային Բանկի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել իրականացնել քննարկված հարցի վերաբերյալ համապատասխան ուսումնասիրություն ս.թ. հունիս ամսվա ընթացքում, որի համապարփակ հաշվետվությունը կներկայացվի հաջորդիվ: Այն հիմք կարող է հանդիսանալ հեռանկարային ծրագրի մշակման համար, որը կհետաքրքրի նաև միջազգային ներդումային և զարգացման կազմակերպություններին:
- Պատրաստակամություն եմ հայտնել, որպեսզի Հայաստանն ակտիվորեն ներգրավվի «Դարձնել քաղաքներն առավել դիմակայուն. իմ քաղաքը պատրաստվում է» գլոբալ արշավին՝ նպատակ հետապնդելով ընդգրկել նոր քաղաքներ, ներկայացնել քույր քաղաքների մշակույթը դիմակայունության բարձրացման ոլորտում:
- Առաջարկել եմ Հայաստանում 2018թ.-ին անցկացնել ռեգիոնալ պլատֆորմի համաժողով:

8. Առաջարկությունները

Կառավարություն ներկայացված ՀՀ ԱԻՆ հնգամյա ծրագիրը կլրամշակվի՝ հաշվի առնելով և հղումներ կատարելով Սենդայի գործողությունների ծրագրի առանձին գերակայությունները՝ փոխկապակցված Կայուն զարգացման նպատակների և ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 6-ի նիստի N 14 արձանագրային որոշմամբ հաստատված աղետների ռիսկի կառավարման ազգային ռազմավարության դրույթների հետ: Հիշյալ մոտեցումը հարկ է կիրառել

նաև կառավարություն ներկայացված այլ գերատեսչությունների կողմից սեկտորալ զարգացման ծրագրերի մշակման գործում:

Առաջարկվում է մշակել մեխանիզմներ, որոնց միջոցով կապահովվի ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացվող և հաջորդիվ ֆինանսավորման հաստատման ենթակա ծրագրերում աղետների ռիսկի նվազեցման և առնչվող այլ հիմնախնդիրների պարտադիր ներառումը, միաժամանակ ներդնել այնպիսի մեխանիզմներ, որոնք կբացառեն սեկտորալ զարգացման այն ծրագրերի հաստատումը, որտեղ բացակայում են աղետների ռիսկի նվազեցման ուղղությունները: Սա հնարավորություն կտա ապահովել ռիսկերի գիտակցումով պայմանավորված կայուն զարգացում բոլոր մակարդակներում:

Կարևորվում է դիմակայանության մշակույթի զարգացումը, այդ թվում՝ աղետների ռիսկերի նվազեցման և կառավարման վերաբերյալ հանրության իրավագիտակցության բարձրացման աշխատանքների շարունակումը:

9. Գործուղվողը

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Դավիթ Տոնոյան

10. Ստորագրությունը, ամսաթիվը

30.05.2017թ.